է որ գերեզման ինքնայ . . . Հիմա որ նորէն մարմինը հոգւոյն հետ կը միանայ , կը տեսնայ նորէն ժամանակը , կ'ուզէ անոր ըրած խաբէութիւնները երեսը զարնել , բայց ժամանակը՝ որուն օրհասը մերձեցած է , անոր երեսին կը կանչէ . " Նմի՛ւտ , ինչո՞ւ խաբուեցար . . . թէ որ դուն երկնաւոր կենաց գրոյն խօսքին մտիկ ըրած ըլլայիր , կ'իմանայիր որ ես Աստուծոյ կէս մի եմ առանց ապագային գալիքը գիտնալու ու ցուցընելու , կ'իմանայիր որ Աստուծոյ կէս ալ ըլլալովս՝ ես իմ վրաս իշխանութիւն մը չունիմ , հապա ամէն իշխանութիւն ժամանակին բացարձակ տիրոջը ձեռքն է : . . . Դու հաւատացիր ինծի , բայց պէտք չէիր հաւատալ . . . Դա խաբեցի զքեզ , բայց դուն ալ գիտէիր որ այս է իմ սովորութիւնս . . : Ո՛ երիտասարդք , դուք որ դեռ չէք ինկած այս խաբեբային ծուղակին մէջ , զգուշացէք , անոր որոգայթներէն . . : Դու թէ որ այս երիտասարդին օրինակովը չխրատուիք , դուք օր մը անկէ աւելի անմիտ պիտի սեպէք ինքզինքնիդ : . . .

Դ.այս դասին ետևէն կու գան տարիներով բեռնաւորեալ ծերեր , բայց անոնք ալ ժամանակին նենգութեանցը դէմ սրդոզած . " Դրաւցընէ , կ'ըսէն , դու մեզի երկայն ատեն տուիր , և մեր պատանեկութեան ու երիտասարդութե՛ ատեն տուած խոստմունքներդ պահեցիր , բայց ան ալ զմեզ խաբելու համար միայն : Դ.ինպէսով վարժեցուցիր զմեզ քու սուտերուդ հաւատալու . և մինչ մեր ատենն էր ալքեզի ականջ չդնելու , քու անոյշ կերպերովդ զմեզ որոգայթիդ մէջ անփրկելի կապեցիր : . . .

Դա յաւիտենականութե՛ դրան քով նստած այս քաներս մտածելուս ատենը , կը զարմանայի այս վերջիններուս ըրած գանգատներուն վրայ , որոնք պէտք չէին իրաւցընէ անօրէն ժամանակէն խաբուիլ . . . ո՜ անզգոյշ ծերեր , ո՞վ ձեզ մէ աւելի կրնար նախագուշակ ըլլալ ժամանակին պատրանացը . . : Ահա որ երիտասարդաց դէմ որոգայթներ կը բանեցընէ , հապա ի՞նչ պիտի չընէ ծերոց , որոնց արդէն դուռը ձեռք առած է . . : Ո՛ հասակնիդ առած մարդիկ , գոնէ ձեր բազմամեայ փորձառութիւնը ձեզի պատճառ ըլլայ ժամանակին գոյնզգոյն կապանքներէն արձակուելու :

Դ.մենէն վերջը դէպ 'ի յաւիտենականութիւն կը վազեն խել մը պարապորդ , մոլի ու անգործ մարդկանց բազմութիւն , որոնց ամենուն ալ բերանը նոյն գանգատները , նոյն ցաւերը , նոյն զիղջերը կը քալեն . բայց ժամանակը ա՛նոնց դիմաց՝ իր սկիզբէն մինչև վերջը բանեցուցած խարդախութիւնները ու խաբէութիւնները դրած՝ կը ցուցընէ իրենց որ իր ըրածները նոր բան չեն , հապա աշխարհիս սկիզբէն մի և նոյն հնարքները 'ի գործ դրեր է՝ իր ծուղակին մէջ զմարդիկ որսալու . անմիտ դուք էք , կ'ըսէ , որ իմ այսչափ խաբէութիւններս տեսնալու աչուընիդ չիբացիք , ու ինձմէ չզգուշացաք . . . Ճշմարտութիւն . . . որ արդարացումն կամ չքմեղանք իրեն դէմ կը զօրէ : . . .

Դոցուեցաւ յաւիտենականութեան դուռը , մեռաւ ժամանակը . . . 'ի յաւիտեանս չբացուելու գերեզմանին վրայ գրուեցաւ արձանագիրը " Դէ ևս է այլ ժամանակ ,, . . : Դսկ ես իմ այս խորունկ մտածութիւններէս արթննալով , ու ես ինքզինքիս վրայ դառնալով , իմ ու իմ հասակակցացս ու կենակցացս ըզգուշութեան համար Դիրաքայ հետ կ'ըսեմ . " Դայեցէք որ աղէկ օրերը ձեռքէ չհանէք , ու ձեր օրերուն ամենամանր մասն ալ պարապ չանցընէք ,, :

ՆԿԱՐԱԳԻՐ

Կերբես յոյն իմաստասիրին մարդկային կեանց պատկերը : (Եր . 332)

" Դ.ՍԱՆԿ բազդի մը կը հանդիպին ուղղութե՛ ձայնին հետևողները . բայց ափսոս որ շատերն ալ՝ ուղղութեան ա՛նուամբը կը մեծարեն այն միւս շրջափակին մէջ նստող հագուած ու զարդարուած կինը , մինչդեռ ինքը ուղ-

ղութեան հակառակամարտ թշնամին՝ սուտ թելադրութիւնն է։ Սակայն բուն ուղղութեան հետևողներն ալ հարկ է որ իր քովէն անցնին, որովհետև ուրիշ ճամբայ չկայ. և երանի՜ իրենց թէ որ անոր սուտ հրապոյրներէն չխաբուելով՝ ճամբանին առաջ տանին։ Սասն զի կը տեսնենք որ ինքն ալ իր պաշտօնասէրներն ունի, քերթողք, հռետորք, երաժիշտք, չափաբանք, երկրաչափք, աստղահմայք, եպիկուրեանք, ճեմականք, բանասէրք, ամէն կարգէ և ամէն աստիճանէ մարդիկ »։

Հարցուցինք թէ ո՞ր ճամբան է մարդուս ճշմարիտ կի՞ բուն ուղղութեան առաջնորդողը։ — « Հեռուանց կը տեսնէք, ըսաւ, անբնակ՝ անապատ ու նեղ ճամբայ մը, որուն ծայրը անձուկ դուռ մը կայ, և ամենաքիչ մարդիկ՝ որոնք դրան առջևը կը սպասեն. հոն դժուարամերձենալի բարձր տեղ մը կայ, չորս կողմը գահաւանդներով ու ժայռիւք. այն է ահաւասիկ ճշմարիտ ուղղութեան ճամբան։ Պիտի զբուցէք թէ խիստ դըժուարին ու անկոխ կ'երևայ, ինչպէս կրնայ մարդ անկէ անվտանգ անցնիլ։ Այց հոն ճամբուն վերը երկու քորք կեցած են Յարատևութիւն ու Համբերութիւն. որոնք ձեռուընին երկընցուցած քաջալերիչ խօսքերով կը յորդորեն ճանապարհորդը որ չվախեն, այնչափ ճամբայ ընելէն ետքը չվհատին, այլ սիրտ առնեն ու առաջ երթան. որովհետև այն դժուարին ճամբան կըտրելէն ետքը, հանգիստ ու զուարճագեղ արահետ մըն է առջևնին ելածը »։ — Այց ինչպէս կրնայ ըլլալ, ըսինք, որ կարենան մարդիկ վեր ելլել, որովհետև մենք ճամբայ մը չենք տեսներ։ — « Երկու Յաւերժհարսունք վար կ'իջնան, ըսաւ, ու դէպ իրենց վեր կը քաշեն. կարողութիւն, շունչ ու քաջալերութիւն կ'ազդեն անոնց. և քանի ալ առաջ երթան, այնչափ ուղղութեան ճամբուն կը մօտենան, որ գեղեցիկ է, հարթ, անարգել և անվտանգ. վասն զի անկէց քիչ մը անդին ծաղկազարդ դաշտի մը մէջ, ինչպէս որ կը տեսնէք, երջանկաց բնակութեան տեղն է, ուր ամէն սառաքինիք և բարեխրատք կը բընակին։ Դրանը մօտ պարկեշտ կին մը կեցած է, տարիքը առած, որ արտաքին զարդ ու պաճուճանք մը չունի. որն որ ոչ եթէ բաղդին պէս շրջուն գնտի մը, հապա հաստատուն և անշարժ խարսխի վրայ կեցած է, և քովն ալ ուրիշ երկու կանայք կան, որ կ'երևայ թէ իրեն դստերքն ըլլան։ Ինքն է ահաւասիկ բուն Ուղղութիւնը, և իրեն ընկերքն են Ճշմարտութիւնն ու Համոզումը։ Հաստատուն խարսխի մը վրայ կեցած է, որպէս զի ամէնքը իմանան թէ անշարժ ու անփոփոխ է իր ճանապարհը, և պարզևքը անանցական. վասն զի իր ամէն հետևողացը հաստատուն անդորրութիւն մը կը բաշխէ, որպէս զի իրենց կենացը մէջ ինչ չար կամ խռովութիւն ալ տեսնեն, ամենևին չտագնապին։ Իր տաճարէն դուրս, դրան քով կեցած է, որպէս զի հոն ապաւինող հիւրերը ախտերնէն բժշկէ, ու փրկարար դեղով մը առողջացընելով, Աստուծոնեան առաջնորդէ։ Այս բանս ձեզի լաւ բացատրելու համար օրինակով մը հասկըցընեմ։ Դանը հիւանդ մը դարմանելու պատճառաւ թէ որ բժիշկ կանչեն, նախ սրբիչ դեղերով անոր հիւանդութենէն առաջ եկած ապականութիւնները կը ջանայ մաքրել, ու ետքը կը սկսի հիւանդը իր առջի առողջութեանը մէջ կազդուրել։ Իսկ թէ որ ախտացեալը բժշկին խօսքերուն մտիկ չընէ, անոր դարմանները չուզենայ իր վրան փորձել, զարմանք չէ որ բնութեան տկարութենէն յաղթուի, և ինչուան մահուան վտանգի մէջ ալ իյնայ։ Բանկ ալ, մարդկային կենաց մէջ ճանապարհորդ մը՝ ինչուան ուղղութեան տաճարը հասնի, կը բժշկուի, և այն ատեն կ'առնէ իրմէն օշարակ մը, որով իր ունեցած առջի ախտերէն բոլորովին կը մաքրուի։ Այս ախտերն են տգիտութիւն ու վրիպանքը, հպարտութիւն, ցանկութիւն, անբարեխառնութիւն, բարկութիւն, ագահութիւն, եւ, զորոնք նենդութեամբ բաժակը իրեն մատուցեալ է։

“Այս ախտերէն երբոր սրբուի, այն ատեն կ'առնեն զինքը Դիպոնիեան և ուրիշ առաքինութեանց բնակարանը կը տանին. և այս առաքինութիւններն են Զօրութիւն, Արդարութիւն, Բարեխառնութիւն, Զգաստութիւն, Աղաչութիւն, ժուժկալութիւն և Քաղցրութիւն, որոնք Ճանապարհորդը իրենց մօրը Երջանկութեան կ'առաջնորդեն, որն որ, ինչպէս կը տեսնէք, տարիքը առած՝ բայց վայելչադէմ կին մըն է, զգեստները վայելուչ՝ սակայն առանց ցուցամոլ շռայլութեան բարձր աթոռի մը վրայ նստած ու ծաղկեայ պսակ մը գլուխը դրած։ Երբոր Ճանապարհորդը իր քովը գայ, դատերացը հետ մէկտեղ կ'ելլէ զինքը կը պսակէ, ինչպէս մենք պատերազմներու մէջ կտրիճ ելլող ախոյեանը կը պսակենք. վասն զի ինքն ալ մեծամեծ թշնամեաց յաղթած է, որոնց ոյժը ամէն գաղաններուն ունեցածէն աւելի, և զորութիւնը զամէնքը կ'ահաբեկէ. և աշխատասիկ ինքը այն թշնամիները ոտքի տակ առած և գերութեան շղթաներով պարաւանդած է. տգիտութիւնը, ցաւը, անբարեխառնութիւնը, ագահութիւնը, և ասոնց նման ուրիշ բազմաթիւ կրքեր։ Երբոր իրեն առաջնորդ առաքինութիւնները կը տանին զինքը իր առջի տեղը, և անկէ բոլոր մահկանացուք և անոնց մոլորութիւններն, ախտերն ու թշուառութիւնները ու բազմազգի նաւաբեկութիւնները կը ցուցընեն, և թէ ինչպէս խեղճերը իրենց թշնամեաց ձեռքը խաղալիկ եղած մոլորաշաւիղ կը թափառին, շղթայից ծանրութիւնը կը զգան ու չեն կրնար խորտակել, երջանկութեան Ճամբան անձկանօք կը փնտռեն ու չեն կրնար գտնել։ Երանի՜ այն կրից բռնութենէն ազատողին։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

Ի ՆԱԽԱՎԿԱՑՆ

ՍՈՒՐԲ ՍՏԵՓԱՆՈՍ

Առաջին պտուղ ծառոյն որ 'ի Գողգոթա.

ՇՆՈՐՀԱԼԻ

ՏԱՂ

Ո՞ւ իմ՝ Ճշմարտութեան համր է՞ բարբառ.
Օ՜ Ճառագայթք նորա յամեն յերկիր խոնարհ։
Ինքն՝ 'ի կայս երանաւէտ արփի հորդեալ լուսալիր
Օ՜ անբաւութեանց ունի ծոց զաստուածութեամբըն պարագիր.
Երկինք 'ի նմա կենդանի
Նմահութեանց բուն աղբիւր.
Ստեղք վառին գեղանի
Ի նրմանէ առեալ հիւռ։ —
Իսկ՝ ընդէ՞ր երկիր վարանի։
Դա կէտ մարդոյն հաստեալ երբեմն յաստուածուստ.
Երանական նրմին վայելք ելին անդուստ.